Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 20 (361) 17-30 նոյեմբեր, 2014թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Միայն համատեղ ջանքերո՛վ կզարգացնենք հայրենիքը

Ավարտվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի հերթական՝ արդեն թվով 17-րդ հեռուստամարաթոնը: Այս տարի էլ Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում ապրող մեր հայրենակիցները համախմբվել էին մեկ ընդհանուր նպատակի շուրջ, այն է՝ զարգացնել եւ շենացնել Հայրենիքը: 1992 թվականին ստեղծված «Հայաստան» համահայկական հիմնադրամը կոչված էր համախմբելու Հայաստանում եւ արտերկրում ապրող բոլոր հայերին, իսկ 1996 թվականից անցկացվող հեռուստամարաթոնները, որոնց արդյունքում իրագործվում են ռազմավարական ծավալուն ծրագրեր, ոչ միայն միջոցներ հավաքելուն են ուղղված, այլեւ հայությանը մեկ միասնական գաղափարի եւ ծրագրի շուրջ համախմբելուն:

Շուրջ երկու տասնամյակ իրականացվող համազգային այս դրամահավաքը ոչ միայն նոր ծրագրեր իրականացնելու միջոց է, այլեւ յուրովի ստուգատես՝ հաշվետվություն պահանջելու, արդեն կատարված աշխատանքը գնահատելու համար:

Համազգային դրամահավաքին մասնակցելով՝ յուրաքանչյուր հայ շատ առարկայական զգում է իր մասնակցությունը կարեւոր գործին, որը կոչվում է հայրենաշինություն, եւ մեկ անգամ մասնակցելով սեփական երկրի զարգացմանը՝ այլեւս անհնար է դառնում նրա ճակատագրին անտարբեր մնալը:

Իրապես հպարտության առիթ են հայկական զույգ հանրապետություններում կյանքի կոչված եւ իրականացվող այն ծրագրերը, որոնք արդյունքն են համայն հայության կամքի եւ նախաձեռնության: Անշուշտ, կարեւոր է հավաքված միջոցների ծավալը, սակայն նվազ կարեւոր չէ մասնակիցների թիվը. մարաթոնն ամբողջությամբ իր նպատակին ծառայում է բացառապես այն դեպքում, երբ մասնակիցների աշխարհագրությունն ու թիվը հասնում է առավելագույնի:

Հայկական զույգ հանրապետությունների ծնունդը, նրանց կայացումն ու շարունակական զարգացումը մեր հավաքական ձեռքբերումն է: Անվտանգ, զարգացած Արցախ ունենալը յուրաքանչյուր հայի օրակարգում պետք է լինի:

Ինչպես նախորդ տարի, այս տարի էլ «Դեպի Արցախ» կարգախոսով անցկացված հեռուստամարաթոնի հանգանակություններն ուղղվել են հայկական երկու հանրապետություններն իրար կապող այլընտրանքային՝ Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի՝ այս անգամ ամբողջական վերակառուցմանը:

Չնայած այն հանգամանքին, որ այս տարվա Հեռուստամարաթոնի արդյունքում հավաքված գումարը նախորդի համեմատ անկում է գրացել, սակայն մասնակիցների թիվն աճել է:

Այնուհանդերձ, անկախ մասնակիցների թվից եւ հանգանակված գումարի չափից, հայության ներուժն երկու առումներով էլ ավելին է, քան ստացված արդյունքը:

Յուրաքանչյուրիս պարտքն է շարունակել ջանք ու եռանդ չխնայել Արցախն ավելի անվտանգ ու զարգացած տեսնելու համար: Հայաստանից դեպի Արցախ տանող ռազմավարական նշանակության 2-րդ ճանապարհի կառուցումը նոր լիցք է հաղորդելու հայկական երկու հանրապետությունների տնտեսական աշխուժությանը, միմյանց հետ առավել ինտեգրվելուն ու մասնավորապես Արցախի անվտանգության ամրապնդմանը:

Սեփական երկրի շենացման, զարգացման գործում ներդրում ունենալու նախանձախնդրությունն ու պատասխանատվությունը պետք է համախմբի աշխարհասփյուռ հայերին՝ անկախ նրանց քաղաքական, հասարակական հայացքներից:

Ինչպես նախորդ տարի, այս տարի էլ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնն անցկացվեց «Դեպի Արցախ» կարգախոսով:

«Հեռուստամարաթոն-2014»-ի ընթացքում համայն հայության ջանքերով հավաքվել է 12 միլիոն 399 հազար 550 ԱՄՆ դոլար:

Հավաքված գումարը կծառայի հայկական երկու հանրապետություններն իրար կապող՝ շուրջ 116 կմ երկարությամբ Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի ասֆալտապատմանն ու հարդարմանը, ինչպես նաեւ Հայաստանում ու Արցախում բարերարների կողմից ընտրված հատուկ ծրագրերին:

Հայաստանն Արցախին միացնող Վարդենիս-Մարտակերտ ճանապարհի ընդհանուր արժեքը 31-32 միլիոն դոլար է: «Հեռուստամարաթոն-2013»-ին 10 միլիոն դոլար արդեն փոխանցվել է ճանապարհի կառուցմանը, մոտ 4 միլիոն դոլարն էլ տրամադրել է ՀՀ կառավարությունը՝ Հայաստանի մասը կառուցելու համար: Ճանապարհն ավարտին հասցնելու համար հարկավոր է շուրջ 17 միլիոն ԱՄՆ դոլար:

Այս պահի դրությամբ ճանապարհի հայաստանյան մասում (14 կմ) գրեթե ավարտին են հասցվել թե հողային, թե ասֆալտապատման աշխատանքները: Լեռնային Ղարաբաղի մասում հողային աշխատանքները մոտենում են ավարտին:

2013-ին նվիրաբերված գումարներով կատարված աշխատանքները ներառում էին՝ ողջ ճանապարհի երկայնքով ջրահեռացման խողովակների տեղադրում, ինժեներական ցանցերի, ափապաշտպան եւ արգելապաշտպան կառույցների իրականացում, հենապատերի ու եզրաքարերի, 17 մեծ ու փոքր կամուրջների կառուցում ու վերանորոգում:

Վարդենիս-Քարվաճառ ճանապարհահատվածի առաջին 12 կմ-ն ասֆալտապատ է: Հաջորդող հատվածը՝ մինչեւ Մարտակերտ, պատված է խտացված հողային պաստառով եւ երթեւեկելի է նաեւ մարդատար մեքենաների համար:

2013-ին հեռուստամարաթոնն արձանագրել էր 22 661 372 ԱՄՆ դոլար նվիրատվություն եւ նվիրատվության խոստում:

Հիմնադրամի կողմից իրականացված դրամահավաքի շրջանակներում ամենաշատ գումարը հավաքվել է 2008-ի հեռուստամարաթոնի ժամանակ՝ 35 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ ամենաքիչը՝ 2004-2005-ին: Այսինքն՝ նվիրատվությունները տարեցտարի աճել են:

Հիմնադրամի տրամադրած միջոցներով կառուցվել է 489 կմ ճանապարհ Հայաստանում եւ Արցախում, 517 կմ ջրագիծ ու ջրամատակարարման համակարգ, 144 կմ գազատար, 70 կմ էլեկտրական հոսանքի գիծ, կառուցվել, վերակառուցվել ու կահավորվել է 334 դպրոց ու մանկապարտեզ, 424 տուն ու բնակարան, 70 առողջապահական հաստատություն, 53 սպորտային ու մշակութային կենտրոն, իրականացվել է ավելի քան 159 կրթական, մշակութային ու գիտական ծրագիր:

Նահատակ օդաչուներն ամփոփվեցին Եռաբլուրում

Նոյեմբերի 25-ին Եռաբլուր զինվորական պանթեոնում կայացել է ադրբեջանական զինուժի կողմից խոցված ԼՂՀ ՊԲ «ՄԻ-24» ուղղաթիռի անձնակազմի անդամների՝ հրամանատար, մայոր Սերգեյ Սահակյանի, ավագ լեյտենանտ Սարգիս Նազարյանի եւ լեյտենանտ Ազատ Սահակյանի զինվորական արարողակարգով հուղարկավորությունը:

Կարդացեք 2-րդ էջում

Արցախում այսուհետ շահավետ է ներդրում կատարելը

Օրերս «Ռուս-հայկական համագործակցության» եւ ՌԴ-ում ԼՂՀ ներկայացուցչության նախաձեռնությամբ Մոսկվայում կայացած ֆորումը, որը նվիրված էր Արցախի զարգացմանը, խթան դարձավ Մոսկվայի հայ համայնքի եւ գործարար շրջանակի կողմից Արցախի նկատմամբ նոր հետաքրքրությունների ձեւավորմանը:

Կարդացեք 3-րդ էջում

Նահատակ օդաչուներն ամփոփվեցին Եռաբլուրում

Նոյեմբերի 25-ին Եռաբլուր զինվորական պանթեոնում կայացել է ադրբեջանական զինուժի կողմից խոցված ԼՂՀ ՊԲ «Մի-24» ուղղաթիռի անձնակազմի անդամների՝ հրամանատար, մայոր Սերգեյ Սահակյանի, ավագ լեյտենանտ Սարգիս Նազարյանի եւ լեյտենանտ Ազատ Սահակյանի զինվորական արարողակարգով հուղարկավորությունը:

Արարողությանը ներկա էին բարձրաստիճան զինվորական պաշտոնյաներ՝ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի գլխավորությամբ, ՀՀ եւ ԼՂՀ քաղաքացիներ, մտավորականներ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով ուղղաթիռի անձնակազմի անդամները հետմահու պարգեւատրվեցին «Արիության» մեդալներով, որոնք տղաների հարազատներին հանձնեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ՊԲ հրամանատար Մովսես Հակոբյանը:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ ԶՈՒ հատուկ գործողությունը սանձեց Ադրբեջանի ցինիզմը

Նոյեմբերի 20-ին ԼՂՀ պաշտպանության բանակը հատուկ գործողությամբ դուրս բերեց զոհված հայ օդաչուների մարմինները հակառակորդի կողմից վերահսկվող չեզոք գոտու տարածքից: Այս գործողության մասին անդրադարձան ինչպես տեղական, այնպես էլ միջազգային լրատվամիջոցները՝ համարելով այն փայլուն ռազմական գործողություն: ԵԱՀԿ-ն եւ մի շարք երկրներ, ինչպես ԱՄՆ-ն, Ֆրանսիան, անդրադառնալով այս գործողությանը, ոչ միայն որեւ քննադատություն չարեցին հայկական կողմի հասցեին, այլեւ, ըստ էության, ասացին, որ իրենք համակարծիք են հայկական կողմի հետ, որ նման գործողությունն անհրաժեշտ էր:

Հայկական կողմն ամեն ինչ արեց, որպեսզի այդ խնդիրը լուծվի դիվանագիտական ճանապարհով՝ միջազգային կազմակերպությունների միջոցով: Սակայն, ըստ ամենայնի, Ադրբեջանն ունակ է հասկանալու միայն ուժի լեզուն, ուստի ճիշտ ժամանակին հայկական կողմը դիմեց հատուկ գործողության՝ դուրս բերելով մեր օդաչուների մարմինները չեզոք գոտուց: Սա փայլուն օրինակ է այն պնդմանը, որ ցանկացած խնդիր լուծելու համար կարեւոր է, որպեզի ունակ լինես խոսելու հավասարապես եւ ուժի, եւ դիվանագիտության, եւ իրավունքի լեզվով:

Ավելացնենք, որ հայկական կողմի գործողությունները ոչ միայն սանձեց Ադրբեջանի ցինիզմը, այլեւ կատարյալ դեպրեսիա առաջացրեց Ադրբեջանի պաշտպանության նախարարությունում, որը սկսեց մեկը մյուսին հակասող հայտարարություններ անել:

Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պարոնայք միջնորդներ, խոսելը դեռեւս գործ չէ

Նոյեմբերի 18-ին ԵԱՀԿ դիտորդական առաքելությունը դիտարկում էր իրականացրել ղարաբաղա-ադրբեջանական սահմանին: Որքանո՞վ է հասկանալի ԵԱՀԿ այս եւ անցյալում կատարած դիտարկումների իմաստը, եթե ամեն անգամ նույն բանն են հայտարարում ու լռում՝ չնայած այն հանգամանքին, որ նույնիսկ եղել են դեպքեր, երբ ադրբեջանական դիրքերից կրակել են հենց իրենց՝ դիտորդական խմբի ուղղությամբ:

Վերջին դիտարկումից հետո ԵԱՀԿ դիտորդները նույնիսկ հայտարարեցին, որ ադրբեջանական կողմը անվտանգության երաշխիքներ չի տվել այն վայրի համար, որտեղ ի սկզբանե ցանկացել են դիտարկումներ անցկացնել: Այստեղ հարց է առաջանում. պարոնայք, իսկ ո՞ւմ են պետք ձեր դիտարկումները, եթե դրանք անց եք կացնում այնպիսի մի վայրում, որտեղ վտանգ չկա, եթե Ադրբեջանը ձեզ՝ դիտորդներիդ արգելում է մոտենալ առաջնագծին, ու դրա վերաբերյալ որեւէ անդրադարձ չի լինում: Ո՞ւմ են պետք եւ ինչի՞ համար են ձեր դիտարկումները, եթե դրանք որեւէ ազդեցություն չեն ունենում իրավիճակի կարգավորմանը: Ինչի՞ համար է ձեր միջնորդությունը, եթե Ադրբեջանը չի թույլատրում սահմանին տեղի ունեցած միջադեպերի հարցով հետաքննություն անցկացնել, եւ դուք կրկին լռում եք՝ տպավորություն ստեղծելով, որ դա նորմալ է: Եվ, ի վերջո, ո՞ւմ աչքին եք թոզ փչում, եթե մինչ օրս ադրբեջանական դիպուկահարների կրակից շարունակում են հայ զինվորներ զոհվել, իսկ դուք չեք կարողանում պարտադրել Ադրբեջանին, որ իր դիպուկահարներին հետ քաշի: Ո՞վ է պատասխանատու այդ բազմաթիվ զոհերի համար: Ինչո՞ւ մինչեւ այժմ սահմանին տեղի ունեցած ցավալի միջադեպերի հարցով որեւէ հետաքննություն չի անցկացվել:

ԵԱՀԿ-ն լռում է նույնիսկ այն ժամանակ, երբ սահմանը պատահաբար կամ անգիտակցորեն անցած անզեն հայերին գերում ու խոշտանգում են, ծաղր ու ծանակի ենթարկում:

ԵԱՀԿ-ն եւ միջազգային մյուս կազմակերպություններն անընդհատ հավասարության նշան են դնում՝ սահմանին կատարվող բոլոր միջադեպերի համար մեղադրելով երկու կողմերին: Նման պահվածքն Ադրբեջանի գործողությունները հասցրել է լկտիության աստիճանի: Այսօր արդեն նրանք ոչ միայն հանդգնում են հայկական անզեն ուղղաթիռ խփել, այլեւ հայտարարում են, որ այդ ամենի մեղավորը ԵԱՀԿ-ն է ու միջազգային հանրությունը: Ադրբեջանական ցինիզմը հասել էր այն աստիճանի, որ արդեն սակարկում էին զոհված հայ օդաչուների աճյունները վերադարձնելը: Սա ոչ միայն անընդունելի է, այլեւ՝ անմարդկային:

Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Նովրուզ Մամեդովն ադրբեջանական «APA» գործակալության հետ հարցազրույցում ասել է, որ եթե ԵԱՀԿ Մինսկի խումբն իր գործելաոճը չփոխի, ապա Բաքուն կփորձի հարցը լուծել սեփական ուժերով. «Մենք Արեւմուտքից արդարացի դիրքորոշում ենք պահանջում Լեռնային Ղարաբաղի հարցում: Ինչո՞ւ Մինսկի խմբի համանախագահները հաջողության հասնել չեն կարողանում: Որովհետեւ նրանք նույնպես անտեսում են միջազգային իրավունքը: Նրանք երբեք չեն հիշատակում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից ընդունված 4 բանաձեւերը»: Այս յուրահատուկ հանդգնության ու մարազմի աստիճանի հասնող ադրբեջանցի չինովնիկի հարցն ու պատասխանը պետք է որ միջազգային հանրության ուշադրության կենտրոնում հայտնվի, սակայն առավել քան համոզված եմ, որ սա նույնպես անտեսության կմատնվի:

Եթե մի հետադարձ հայացք գցենք, ապա կհասկանանք, որ Ադրբեջանի լկտիությունը պրոգրեսիայի նման աճում է: Սկզբում ադրբեջանական դիպուկահարների կրակոցից զոհվում էին հայ զինվորներ: Այդ ամենը հաջողությամբ մարսելով՝ ադրբեջանական արկածախնդրությունը հասավ այն աստիճանի, որ դիվերսիոն գործողություններ սկսեց՝ գրոհելով մեր դիրքերը եւ կրակելով Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի վրա: Իսկ այժմ, անպատժելիության ու ամենաթողության ձեւավորած մթնոլորտի արդյունքում, ադրբեջանական լկտիությունն ու արկածախնդրությունը հասել է այն աստիճանի, որ նույնիսկ հանդգնում են հայկական ուղղաթիռ խփել:

Այդ ամենն ապացուցում է մի բան՝ անհապաղ պետք է սանձել Ադրբեջանին եւ անպատասխան չթողնել նրա արկածախնդրությունները: Եթե միջազգային հանրությունը չի կարողանում սանձել, ապա դա կարող ենք անել մենք՝ մեր իսկ միջոցներով, որն ավելի արդյունավետ կլինի, քան ցանկացած միջազգային մեծ կամ փոքր չինովնիկի անհասկանալի ու անհասցե հայտարարություն: Ի դեպ, ժամանակին Ադրբեջանն ինքն է հրաժարվել ներկայումս իր կողմից այդքան շատ թմբկահարվող ՄԱԿ-ի բանաձեւերի կատարումից:

Ադրբեջանի պահվածքը նման է հղփացած հարուստի երեխայի պահվածքի, որին ամենաթողության են մատնել, ու նա անում է այն, ինչ ուզում է:

Այս ամենից հետո մնում է միայն հավելել հետեւյալ բողոք-կոչը. պարոնա՛յք, արդեն ժամանակն է իրերն իրենց անունով կոչելու: Ձեւական դիտարկումների փոխարեն լավ կլիներ սկսել դեպքերի հետաքննություն ու պարզել մեղավորներին: Ժամանակն է, որ ձեր անհասցե հայտարարությունները կոնկրետացվեն: Ձնջեք այն հավասարության նշանը, որ ամեն անգամ դնում եք կողմերի մասին խոսելիս, թե չէ, ո՞վ գիտե, այդ հավասարության տրամաբանությունը ի՞նչ հետեւանքներ կարող է ծնել, եւ այնժամ ոչ ոք չի կարողանա գործողությունների ընթացքը կանխատեսել:

Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՄՆ-ն հաստատել է ԼՂՀ ՊԲ հայտարարությունը

ԱՄՆ պետքարտուղարության մամուլի քարտուղար Ջեֆ Ռատկեն լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասել է, որ ԱՄՆ-ն հետեւել է հայկական խոցված ուղղաթիռի օդաչուների դիերի դուրս բերման հատուկ գործողությանը: «Մենք, իհարկե, հետեւել ենք սպանված երեք օդաչուների դիերի դուրս բերման գործողությանը: Այս միջադեպը եւս մեկ անգամ ընդգծում է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության համար անհրաժեշտ է գտնել խաղաղ լուծում»,- ասել է նա:

Այն հարցին, թե ի՞նչ քայլեր է ձեռնարկում ԱՄՆ պետքարտուղարությունը դեպքի վայր ԵԱՀԿ դիտորդների մուտքը հնարավոր դարձնելու համար, մամուլի քարտուղարը հստակ պատասխան չի տվել՝ նշելով միայն, որ պետքարտուղարությունը, ինչպես եւ ԵԱՀԿ-ն, հասկանում են, որ հնարավոր է, որ դիտորդներին թույլ չեն տվել մոտենալ խոցված ուղղաթիռին:

Սրանով, փաստորեն, ԱՄՆ-ն հաստատեց հայկական կողմի հայտարարություններն Ադրբեջանի կողմից խոցված ուղղաթիռի անձնակազմի անդամների դիերը չեզոք գոտուց դուրս բերելու հատուկ գործողության վերաբերյալ: Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հերքել էր ԼՂՀ ՊԲ տարածած հայտարարությունը, ինչին ի պատասխան՝ ԼՂՀ ՊԲ-ն ապացույցներ էր հրապարակել հատուկ գործողության վերաբերյալ:

Ինչ վերաբերում է հայտարարության երկրորդ մասին՝ նշենք, որ խոցված ուղղաթիռի վայր դիտորդների մուտքն արգելվել է Ադրբեջանի կողմից: Կրկին անհասցե հայտարարություն է տրվել, սակայն այս անգամ, թեկուզեւ անուղղակիորեն, Ադրբեջանի անընդունելի պահվածքի մասին:

Սեփ.ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Արցախում այսուհետ շահավետ է ներդրում կատարելը

Օրերս «Ռուս-հայկական համագործակցության» եւ ՌԴ-ում ԼՂՀ ներկայացուցչության նախաձեռնությամբ Մոսկվայում կայացած ֆորումը, որը նվիրված էր Արցախի զարգացմանը, խթան դարձավ Մոսկվայի հայ համայնքի եւ գործարար շրջանակի կողմից Արցախի նկատմամբ նոր հետաքրքրությունների ձեւավորմանը:

Ֆորումի գլխավոր հյուրը ԼՂՀ փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանն էր: Նա հանդես է եկել «Արցախի ներդրումային հնարավորությունները եւ տնտեսական զարգացման հեռանկարները. ծրագրեր եւ համագործակցության հնարավորություններ» զեկույցով, մանրամասն ու իրատեսորեն նկարագրել Արցախի ղեկավարության եւ բնակչության առջեւ ծառացած խնդիրներն ու իրավիճակը:

«Պատերազմի վերսկսման մշտական վտանգը ի վիճակի չէ կանգնեցնելու տնտեսության աճը, ինչը հանդիսանում է Ղարաբաղի իրական անկախության առարկայական հիմքը»,- իր ելույթում ասել է ԼՂՀ փոխվարչապետը: Արթուր Աղաբեկյանը նշել է, որ Արցախը դեռեւս տնտեսության տարբեր ճյուղերում ունի շատ չօգտագործված հնարավորություններ, ինչպես նաեւ ներկայացրել ԼՂՀ-ում ներդրողների ունեցած ներդրողական եւ այլ արտոնությունները:

ԼՂՀ փոխվարչապետն իր խոսքում շեշտել է, որ ԼՂՀ կառավարությունը մշակել եւ իրագործում է տնտեսությունում ֆինանսների ներգրավման նոր ձեւ՝ Ազգային վիճակախաղի տեսքով, որի եկամուտն ուղղվում է տնտեսության զարգացմանը: 2014 թ. դեկտեմբերի 28-ին տեղի կունենա Ազգային վիճակախաղի երկրորդ խաղարկությունը: Անցյալ տարվա վիճակախաղի միջոցներով Իշխանաձորում կառուցվել են բազմանդամ ընտանիքների համար տներ եւ բացվել են նոր աշխատատեղեր:

ԼՂՀ փոխվարչապետի զեկույցը շահագրգիռ առաջարկություններ է առաջացրել:

Ֆորումի ժամանակ Արցախից պահածոների խոշոր քանակություն գնելու եւ Ռուսաստանում իրացնելու ցանկություն է հայտնել մոսկովյան ընկերություններից մեկը:

Խոսվել է նաեւ Արցախում աշխատելու համար Մոսկվայում բաժնետիրական ներդրումային հիմնադրամի ստեղծման մասին: Շատերը ցանկություն են հայտնել տեղում ծանոթանալու համագործակցության հնարավորություններին: Ա.Աղաբեկյանը վստահեցրել է, որ բոլոր առաջարկություններն ու դիտողությունները հաշվի կառնվեն, միաժամանակ ընդգծել, որ Արցախի տնտեսության ամրապնդմանը մասնակցելու հնարավորություն է բացվում ոչ միայն խոշոր ներդրողի, այլ նաեւ միջին դասի ու ամեն ցանկացողի համար:

Ամփոփելով հանդիպումը՝ Ֆորումի կազմակերպիչ, «Ռուս-հայկական համագործակցություն» կազմակերպության նախագահ Յուրի Նավոյանը նշել է, որ ԼՂՀ փոխվարչապետի հետ երկխոսությունը, ԼՂՀ կառավարության ծրագրերի հետ ծանոթությունը ցույց են տալիս, որ կան բազմաթիվ ձեւեր, որոնք թույլ են տալիս իրացնելու այն բարոյական ու հոգեւոր պարտքը, որ յուրաքանչյուր հայ ունի Արցախի նկատմամբ: «Մեր խնդիրն է՝ ընդլայնելու շահագրգիռ անձանց շրջանակը, գտնելու խիզախ ու հավատարիմ գործընկերներ: Սա ոչ միայն Արցախի, այլ նաեւ ողջ հայության խնդիրն է: Եվ լավ է, որ Արցախի ղեկավարությունն ու կառավարությունը գտնվում են ներդրողների եւ սփյուռքի հետ աշխատանքի նոր մեթոդների ու ձեւերի մշտական փնտրտուքի մեջ: Նրանք ֆինանսական օգնություն չեն խնդրում, այլ առաջարկում են փոխշահավետ եւ օգտավետ բիզնես: Դա համապատասխանում է ժամանակի ոգուն եւ համոզիչ է»,- ասել է Յուրի Նավոյանը:

ԼՂՀ կառավարության եւ Մոսկվայի հայ համայնքի հաջողված երկխոսության արդյունքում՝ «Ռուս-հայկական համագործակցությունը» առաջարկել է Մոսկվայում Արցախի ներդրումային ֆորումը դարձնել ամենամյա:

Սեփ.ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Թեհրանում կայացել է «Հայ Դատն այսօր» 11-րդ խորհրդաժողովը

Թեհրանի Հայ Դատի հանձնախմբի նախաձեռնությամբ օրերս տեղի է ունեցել «Միացյալ Հայաստան. հնարավորություններ, հեռանկարներ» վերտառությամբ «Հայ Դատն այսօր» 11-րդ խորհրդաժողովը՝ նպատակ ունենալով վեր հանելու բոլոր մարտահրավերները, դրանց հաղթահարման ուղիները, հնարավորություններն ու առիթները, որոնք առկա են Հայ Դատի վերջնական նպատակի՝ Ազատ Անկախ Միացյալ Հայաստանի ստեղծման գործում:

Բացման նիստին հրավիրված էր Թ.Հ.Թ. առաջնորդ Տ.Սեպուհ արք. Սարգսյանը:

Հրավիրյալների շարքում էին ՀՅԴ Բյուրոյի անդամ Լեւոն Մկրտչյանը, Եվրոպայի Հայ Դատի գրասենյակի պատասխանատու Գասպար Կարապետյանը, ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, Սիրիայի Հայ Դատի հանձնախմբի անդամ Արամ Ավագյանը, «Մոդուս վիվենդի» կենտրոնի ղեկավար Արա Պապյանը, Լիբանանի Հայ Դատի հանձնախմբի ատենապետ եւ «Ազդակ» օրաթերթի շրջանային ու միջազգային լուրերի խմբագիր Վահրամ Էմմիյանը եւ այլոք:

Հրավիրյալները հանդես եկան զեկույցներով:

Յուրաքանչյուր զեկույցից հետո լսարանին առիթ տրվեց հարցումների եւ տեսակետների արտահայտման, բուռն քննարկումների:

«Արցախի դերն ու նշանակությունը Հայ Դատի համար տարվող պայքարի գործընթացում» թեմային անդրադարձել է Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը:

Խորհրդաժողովի վերջում ելույթ է ունեցել Թ. Հ. Թ. թեմական խորհրդի կողմից կյանքի կոչված Հայոց Ցեղասպանության 100-ամյակի հանձնախմբի նախագահ Արմենուշ Առաքելյանը, ով զեկուցել է հանձնախմբի կողմից իրականացվող աշխատանքների մասին:

«Հայ Դատն այսօր» 11-րդ խորհրդաժողովը, լսելով ներկայացված զեկույցները, ծավալված քննարկումներն ու հնչեցրած մտքերը, հանդես է եկել բանաձեւերով.

1. Հայ Դատի լուծման վերջնական տեսլականը եղել եւ մնում է Միացյալ Հայաստանի ձեւավորումը, առանց որի դժվար է պատկերացնել հայ ժողովրդի լիարժեք կենսագործունեության ապահովումն՝ աշխարհաքաղաքական բարդ իրադարձությունների եւ զարգացումների համատեքստում:

2. Միացյալ Հայաստանի սահմանումը բնորոշվում է Սեւրի պայմանագրով եւ Վիլսոնյան իրավարար վճռով:

Սրանք այն փաստաթղթերն են, որոնք չեն կորցրել իրենց այժմեականությունը եւ շարունակելու են պահպանել իրենց իրավական ուժը, եթե մենք օր առաջ քայլեր ձեռնարկենք դրանց կյանքի կոչման կապակցությամբ:

3. Անհրաժեշտ է ազգովի գալ այն համոզման, որ անկախ հավատամքի, լեզվական եւ ապրելավայրի տարբերության, հայ ժողովրդի բոլոր մասնիկների ու բեկորների հավաքական եւ համատեղ ջանքերի շնորհիվ է միայն, որ մեզ հաջողվելու է կյանքի կոչել Միացյալ Հայաստանի գաղափարը:

4. Վերոնշյալ սահմանումից ելնելով՝ յուրաքանչյուր հայկական բեկոր կամ համայնք, ինչպես նաեւ Հայաստանի եւ Արցախի Հանրապետություններն իրենց պետական համակարգերով պետք է նպաստեն միջազգային հանրության կողմից Միացյալ Հայաստանի գաղափարի ընկալման եւ դրա կյանքի կոչման շուրջ դրական կարծիքի ձեւավորման գործին:

5. Միացյալ Հայաստանի գաղափարի կենսագործման համար անհրաժեշտ է մշակել ազգային, գաղափարախոսական նպատակային ընկալում, որը կնպաստի այս կապակցությամբ ռազմավարության մշակման, որի հիմամբ հնարավոր կլինի վեր հանել բոլոր մարտահրավերները, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության հիմնահարցի համատեքստում 100-ամյա պահանջատիրության պայքարի հստակ սահմանումն ու հիմնավորումը, ճշտել դրանց հաղթահարման ուղիները, սահմանել հնարավորություններն ու առիթները:

Հավատում ենք, որ Միացյալ Հայաստանի եւ միացյալ հայության տեսլականները միանգամայն իրատեսական եւ իրականանալի գաղափարներ են, որոնց շնորհիվ էլ երաշխավորվելու են քաղաքակիրթ մարդկության ընտանիքում հայության գալիք սերունդների բնականոն կենսագործունեությունը:

«ԱՊԱՌԱԺ»

ՀՅԴ ԱԵՄ-Ի անդամը մասնակցեց «Պայքար բռնության մշակույթի դեմ» դասընթացին

Միջազգային Ֆալկոն շարժում ընկերվարական դաստիարակչական միջազգայնական կազմակերպության հրավերով 2014 թ. նոյեմբերի 16-23-ը Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում տեղի ունեցավ դասընթաց՝ «Պայքար բռնության մշակույթի դեմ» թեմայով:

ՀՅԴ Արցախի երիտասարդական միության անունից դասընթացին մասնակցել է Սուսաննա Մովսիսյանը:

Դասընթացին մասնակցել են տարբեր երկրներից 22 պատվիրակներ՝ Վրաստանից, Շվեդիայից, Ալբանիայից, Սենեգալից, Մակեդոնիայից, Սերբիայից, Գերմանիայից եւ այլ:

ՀՅԴ երիտասարդականի ներկայացուցիչն իր ելույթում մանրամասնորեն նկարագրել է Դաշնակցության պատանեկան միութունների գործունեությունը՝ շեշտելով, որ դաստիարակության հիմքում դրված է խտրականության եւ բռնության դեմ պայքարը, խաղաղության կարեւորությունը, հանդուրժողականությունը եւ այլն:

Ս. Մովսիսյանը ներկայացրել է սպա Գուրգեն Մարգարյանի սպանությունը, որը տեղի ունեցավ հենց Բուդապեշտում, եւ որը անհանդուրժողականության եւ բռնության ցայտուն դրսեւորում է ադրբեջանցիների կողմից:

ՀՅԴ ԱԵՄ-ի ներկայացուցիչը պատմել է Հայոց ցեղասպանության մասին, նշել, որ Թուրքիան ցարդ չի ընդունում իր մեղքը, ավելին՝ շարունակում է ատելությունը հայերի նկատմամբ, որի ապացույցներից է Հրանտ Դինքի սպանությունը: Նա առաջարկել է մասնակիցներին լուսանկարվել Հայոց ցեղասպանության ճանաչումը պահանջող պաստառով, ինչը ընդառաջվել է մասնակիցների կողմից:

Սուսաննա Մովսիսյանի խոսքերով՝ «Պայքար բռնության մշակույթի դեմ» թեման առավել քան արդիական է մեզ համար, քանի որ արդեն տասնյակ տարիներ մենք առնչվում ենք թեմայից բխող մի շարք խնդիրների հետ: Նման հանդիպումները կարեւոր են այն առումով, որ ներկա են լինում տասնյակ երկրների առավել ակտիվ երիտասարդներ, եւ անհրաժեշտություն կա մեր երկիրը պատշաճ ներկայացնելու, նշելու թե Ադրբեջանի, թե Թուրքիայի բռնությունից բխող մի շարք խնդիրներ:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Բակո Սահակյանը Լոս Անջելեսում հանդիպումներ է ունեցել ավանդական կուսակցությունների ղեկավարների հետ

Արցախի Հանրապետության նախագահը Լոս Անջելեսում հանդիպում է ունեցել ՀՅԴ Արեւմտյան Ամերիկայի Կենտրոնական կոմիտեի պատասխանատուների, Սոցիալ-Ժողովրդավարական հնչակյան կուսակցության Արեւմտյան Ամերիկայի վարչական մարմնի, Ռամկավար ազատական կուսակցության Արեւմտյան Ամերիկայի շրջանային վարչության հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են Արցախի ներքին եւ արտաքին քաղաքականությանը, Արցախ-Սփյուռք համագործակցությանը վերաբերող տարբեր հարցեր:

Երկրի ղեկավարը կարեւորել է ավանդական կուսակցությունների դերակատարությունն Արցախին սատարելու, համազգային կարեւորագույն խնդիրների լուծման, Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման հարթություններում՝ հավելելով, որ Արցախը շահագրգռված է հետեւողական շարունակելու եւ խորացնելու այս փոխգործակցությունը:

Հանդիպումներին մասնակցում էին ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Տիգրան Սարգսյանը, Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոս Սերգեյ Սարկիսովը, ԱՄՆ-ում եւ Կանադայում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը, պաշտոնատար այլ անձինք:

Սեփ.ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Արցախի նախագահը Լոս Անջելեսում հանդիպել է ՀՕՄ-ի ներկայացուցիչների հետ

Արցախի Հանրապետության նախագահը Լոս Անջելեսում այցելել է Հայ օգնության միության (ՀՕՄ) Արեւմտյան ԱՄՆ-ի շրջանային վարչության գրասենյակ եւ հանդիպում ունեցել ՀՕՄ-ի Կենտրոնական վարչության անդամների, ՀՕՄ-ի Արեւմտյան ԱՄՆ շրջանային վարչության կազմի, կազմակերպության անդամների հետ:

Բակո Սահակյանը ՀՕՄ-ը համարել է Սփյուռքի ամենակայացած կառույցներից մեկը՝ կարեւորելով նրա գործունեությունը ինչպես հայրենիքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Արցախի նախագահը նշել է, որ կազմակերպության կողմից Արցախում իրականացվող աշխատանքները հայրենասիրության լավագույն դրսեւորումներից են եւ ակներեւ ազդեցություն ունեն մեր հանրապետության կյանքում:

Նախագահ Սահակյանը նաեւ պատասխանել է ներկաների կողմից բարձրացված տարաբնույթ հարցերին:

Նախագահին ուղեկցում էին Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը, ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Տիգրան Սարգսյանը, պաշտոնատար այլ անձինք:

Անի ԱՋԱՏՅԱՆ

Հայկական լավաշն այսուհետ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգություն է համարվում

ՀՀ ԱԳ փոխանցմամբ՝ նոյեմբերի 26-ին Փարիզում ընթացող ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի միջկառավարական կոմիտեի 9-րդ նիստին որոշվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում ներառել Հայաստանի կողմից ներկայացված «Լավաշ. ավանդական հացի պատրաստումը, նշանակությունը եւ մշակութային դրսեւորումները Հայաստանում» հայտը:

Նշենք, որ 2013թ. ներկայացված հայտն անցել է կոնվենցիայով սահմանված ընթացակարգային փուլերը՝ ստանալով փորձագիտական դրական եզրակացություն:

Հայտը պատրաստվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի, Մշակույթի նախարարության եւ Հայաստանի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի կողմից:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում ընդգրկումը հիստերիա է առաջացրել մեր հարեւանների մոտ: Հատկապես թուրքական լրատվամիջոցները վայնասուն են բարձրացրել՝ հիրապարակումներում նշելով, թե իբր լավաշը թուրքական ծագում ունի, ու այն եղել է թուրքական հարսանիքների անբաժան մասը: Իսկ Թուրքիայի մշակույթի եւ զբոսաշրջության նախարար Օմեր Չելիքը հայտարարել է, թե իբր Թուրքիան եւ Ադրբեջանը պատրաստվում էին համատեղ դիմել ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ լավաշը որպես թուրքական ոչ նյութական արժեք ներառելու համար:

Լավաշի ընդգրկումով՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկը համալրվեց հայկական եւս մեկ՝ չորրորդ մշակութային արժեքով:

Հիշեցնենք, որ Հայաստանը 2006-ից միացել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի նշյալ կոնվենցիային: ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում ներառված են նաեւ «Դուդուկը եւ դրա երաժշտությունը», «Խաչքարի խորհուրդը եւ խաչքարագործությունը», «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսի կատարողական դրսեւորումները հայտերը:

Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ասկերան քաղաքն ու Ֆրանսիայի Բուկ Բել Էրը քույր քաղաքներ են

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերան քաղաքի եւ Ֆրանսիայի Բուկ Բել Էր քաղաքների միջեւ օրերս ստորագրվել է բարեկամության հռչակագիր: Հռչակագիրը ստորագրել են ԼՂՀ մշակույթի նախարար Նարինե Աղաբալյանը եւ Բուկ Բել Էրի քաղաքապետ Ռիշար Մալիեն:

Հռչակագիրը ողջունում է ազատ եւ ժողովրդավարական հասարակություն ստեղծելուն եւ զարգացնելուն ուղղված Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ու իշխանությունների հետեւողական քայլերը, ինչպես նաեւ անընդունելի է համարում Արցախի ժողովրդի մեկուսացումը:

Այն նպատակ ունի ամրապնդելու երկու քաղաքների միջեւ բարեկամական կապերը եւ համատեղ համագործակցություն հաստատելու կրթության, մշակույթի եւ սպորտի բնագավառներում:

«ԱՊԱՌԱԺ»

Ավանդույթները շարունակվում են. Մեծ Թաղերում վերաբացվել է գորգագործական արտադրամասը

Մեծ Թաղերը Հադրութի շրջանի ամենամեծ գյուղն է: Այն ունի հազար չորս հարյուրից ավելի բնակիչ: Բնակիչները հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ ու անասնապահությամբ: Ինչպես ամեն մի գյուղի, այնպես էլ Մեծ Թաղերի բնակիչներն ունեն իրենց դարդն ու հոգսը, սակայն չեն դժգոհում: «Աշխատող մարդը չի կորի. պիտի աշխատես, ստեղծես, որ ապրես»,- ասում է գյուղի տարեց բնակիչներից մեկը: Իսկ մյուսը, որ երեսուն տարեկան կին է, չորս երեխաների մայր, ավելացնում է. «Մեծ ոգեւորություն ապրեցի, երբ լսեցի, որ գյուղում գորգագործական արտադրամաս է բացվում: Առաջիններից մեկն եղա, որ աշխատանքի ընդունվելու դիմում գրեցի: Թեեւ ծանոթ չեմ գորգ գործելուն, բայց, ինչպես ասում են, կնոջ ձեռքից բան չի պրծնի,- ծիծաղում է,- համոզված եմ՝ շուտով կընտելանամ գործին»:

Մեծ Թաղերը հնուց ի վեր հայտնի է եղել շերամապահությամբ, մետաքսագործությամբ ու գորգագործությամբ: Տարբեր ժամանակներում ունեցել է գորգագործական արտադրամասեր: Գորգագործության խորն արմատների մասին է վկայում Իշխանագետի հին գերեզմանաքարին քանդակված գորգը: Մեծ Թաղերի գորգերը գովաբանվել են ԱՄՆ-ում, Գերմանիայում, Բելգիայում, Ֆրանսիայում:

Այսօր, ի ուրախություն գյուղի բնակիչների, Մեծ Թաղերում նորից բացվել

է գորգագործական արտադրամաս: Նորաբաց «ՄԹԱԳ» ՍՊԸ-ն (Մեծ Թաղերի ավանդական գորգագործություն) դեռ 10 աշխատող ունի, սակայն նպատակ ունի ընդլայնելու իր գործունեությունը, ավելի շատ գյուղացիների աշխատանքով ապահովելու:

Արտադրամասը սերտորեն համագործակցում է Արցախում գործող «Ղարաբաղ կարպետ» ընկերության հետ. կազմակերպվում են փոխադարձ այցելություններ, փորձառություն են վերցնում, ծանոթանում գորգի գործման արվեստին, վարպետանում:

Նորաբաց արտադրամասի տնօրեն Գարիկ Ոսկանյանը մեզ հետ ունեցած զրույցի ժամանակ նշեց. «Դարերի պատմություն ունի Մեծ Թաղերի գորգագործությունը: Գյուղը միշտ էլ հայտնի է եղել այս առումով. ամեն ընտանիքում դազգահ կար, կանայք գործում էին գորգ ու կարպետ: Իսկ 1930-1981 թվականներին գյուղում արդեն կար գորգագործարան, որտեղ 50-60 գորգագործ կանայք էին աշխատում: Նրանց գործած գորգերը շատ հայտնի էին Խորհրդային Միությունում:

Խորհրդային կարգերի անկումից հետո գործարանը միառժամանակ փակվեց, ապա տարիներ անց նորից բացվեց: 1992-2005 թվականներին գործում էր գորգագործական արհեստանոց, որն ուներ փորձառու աշխատողներ: Սակայն, մի քանի տարիների աշխատանքից հետո, որոշ խնդիրների հետ կապված, այն դադարեց գործել:

Այսօր, ԼՂՀ փոխվարչապետ, համագյուղացի Արթուր Աղաբեկյանի ջանքերի շնորհիվ արդեն մի քանի օր է, ինչ գյուղում գործում է գորգագործական այս արտադրամասը»:

Տնօրենի խոսքով՝ գորգագործները ոգեւորված են. նրանցից ոմանք տիրապետում են գործին, ոմանք՝ նոր են սովորում: «Հույս ունենք՝ կկարողանանք արդարացնել մեզ, նպաստել Մեծ Թաղերի ավանդական գորգագործության վերականգնմանը»,- նշեց Գ. Ոսկանյանը:

Հերմինե ԱՎԱԳՅԱՆ

Հայ որբերի պատրաստած գորգը Սպիտակ տանը

Հայոց ցեղասպանությունը խորհրդանշող՝ «Որբերի գորգը» կամ «Ղազիրի գորգը» նոյեմբերի 18-23-ին, երկար տարիների վիճաբանություններից եւ Թուրքիայի ճնշումների հետեւանքով պահվելուց հետո, ցուցադրվեց ԱՄՆ նախագահի նստավայրի այցելուների սրահում: Գորգը գործել են Ցեղասպանությունից մազապուրծ հայ որբերը եւ 1925թ. նվիրել ԱՄՆ նախագահ Քելվին Քուլիջին՝ Հայոց ցեղասպանությունից տուժածներին օգնություն ցուցաբերելու համար:

ՀՅԴ Հայ Դատի ԱՄՆ հանձնախմբի ղեկավար Արամ Համբարյանը ներկա է գտնվել Սպիտակ տանը «Որբերի գորգի» ցուցադրության բացմանը:

«Գորգն ամերիկյան մարդկանց հոգու հարստության վառ ապացույցն է, ում աննախադեպ մարդասիրական օգնությունը փրկեց Հայոց ցեղասպանության հարյուր հազարավոր վերապրածների՝ ներառյալ հայ որբերին, ովքեր մանրակրկիտ պատրաստել էին այս զարմանահրաշ, ամերիկյան եւ հայոց պատմության նմուշը: Ցավոք, ցուցադրության նկարագրության մեջ օգտագործված է խուսափողական ու թույլ լեզու, որը զրկում է այդ՝ խորապես կարեւոր աշխատանքը արվեստի իր բարոյական եւ պատմական իմաստից: Այն նաեւ զրկում է հեռուստադիտողներին հնարավորինս իմանալու Հայոց ցեղասպանության վերաբերյալ, որը նաեւ հետագայում դաժանությունները կանխելու դաս էե,- ասել է Արամ Համբարյանը:

Գորգի վրա պատկերված է դրախտի պարտեզը, որի ստեղծումը տեւել է 18 ամիս: 3.5 x 5.8 մետր չափով գորգը շատ լավ վիճակում է: 1929 թվականին, երբ ավարտվել է Քուլիջի պաշտոնավարման ժամկետը, գորգն առանձնացվել է որպես նրա անձնական գույք, սակայն 1982 թվականին՝ որպես նվեր նախագահի ընտանիքի կողմից հանձնվել Սպիտակ տանը: Այն ժամանակվանից ի վեր՝ գորգը մեկ անգամ է ցուցադրվել, ու դարձել է հայ եւ ամերիկացի ժողովուրդների բարեկամության հիշատակը:

Սպիտակ տան ցուցադրությունը կրում է «Շնորհակալություն ԱՄՆ-ին. երեք նվեր նախագահներին՝ որպես երախտագիտություն արտերկրում ամերիկյան առատաձեռնությանե անվանումը:

«Այն բանից հետո, երբ ԱՄՆ նախագահ Բարաք Օբամային մոտ աղբյուրները հայտարարեցին Հայոց ցեղասպանությունը խորհրդանշող գորգը Սպիտակ տանը ցուցադրելու մասին, այն էլ՝ 2015 թվականին՝ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ, ակամայից առաջ եկավ այն միտքը, թե Օբաման Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում քայլ է անում: Այդ որոշումը նաեւ ընկալվեց որպես ԱՄՆ ղեկավարության մեսիջը Թուրքիային, որի հետ անհամաձայնություններ ունի: Այնուհետեւ իրավիճակի պարզաբանման համար հայտարարությամբ հանդես եկավ Սպիտակ տան անվտանգության խորհրդի խոսնակ Մարկ Սթրոհը՝ հայտարարելով, որ «Ղազիրի գորգի» ցուցադրումը բացարձակապես չունի մեսիջ ուղարկելու իմաստ»,- գրում է «Ակօս»-ը:

«Ակօս»-ը զրուցել է Ղազիրի որբանոցի եւ գորգերի մասին ֆիլմերով հայտնի՝ Մորիս Միսակ Քելեչյանի եւ «Հայ մշակույթի հիմնադրամ»-ի տնօրեն

Արա Ղազարյանի հետ: Քելեչյանը հայտնել է, որ Սպիտակ տանը, Հայոց ցեղասպանությունը խորհրդանշող գորգից բացի, ցուցադրվելու են նաեւ այլ իրեր, որոնցից է Ֆրանսիայի Սեւր քաղաքից ուղարկված ծաղկամանը: Վերջինիս ցուցադրումը Քելեչյանը մեկնաբանել է՝ որպես «տարօրինակ զուգադիպություն», Սեւրի պայմանագրի հիշեցում:

Ըստ Քելեչյանի, եթե Բարաք Օբաման «Ցեղասպանություն» բառն արտասանի, առաջինը չի լինի, քանի որ ԱՄՆ նախագահ Ռոնալդ Ռեյգանն արդեն բացահայտորեն արտասանել է «Հայոց ցեղասպանություն» արտահայտությունը: Նշելով, որ 1951 թվականից ԱՄՆ Կոնգրեսում այս հարցի ուղղությամբ բազում որոշումներ են ընդունվել, Քելեչյանն ասել է, որ 1951-ին ԱՄՆ արդարադատության նախարարությունն ընդունել է պաշտոնական փաստաթղթերում «Հայոց ցեղասպանություն» արտահայտությունը գրելու որոշում: Նա համոզված է, որ գորգի ցուցադրումը չպետք է սահմանափակվի ընդամենը 5 օրով. այն պետք է ցուցադրել երկրի բոլոր շրջանների հեղինակավոր թանգարաններում:

Գորգի ստեղծման պատմությունը

Հայոց ցեղասպանությունից հետո «Մերձավոր Արեւելքի նպաստամատույցե ծրագիրը (Near East Relief) 116 միլիոն դոլլարի մարդասիրական օգնություն է ցուցաբերել միլիոնավոր կարիքավորների, այդ թվում՝ տասնյակ հազարավոր տարագիր հայերի:

Այդ ժամանակ Լիբանանի տարածքում գտնվող Ղազիր գյուղում «Near East Relief»-ի օժանդակությամբ տեղավորվել էր 1400 որբ հայ աղջիկ: Նրանց խնամում էին շվեյցարացի միսիոներ Հակոբ Կունսլերը եւ նրա կինը՝ Էլիզաբեթը: 1920թ. Կունսլերները որոշում են որբերին գորգ գործել տալ՝ նվիրելու ԱՄՆ նախագահ Քելվին Քուլիջին՝ ի նշան երախտագիտության Ամերիկայի ժողովրդին: Ղազիրում գորգի գործարան ստեղծելը որբերի համար նաեւ աշխատավայր ունենալու լավ հնարավորություն էր: Գորգը հենց տեղանքի անվանումով կոչվել է «Ղազիրի գորգ»:

Պատրաստեց Արմինե ՆԱՐԻՆՅԱՆԸ

Նորայր Քամալյան. իրական հերոսը

Իրական հերոսները շատ համեստ են լինում: Նրանք չեն սիրում խոսել իրենց արածների մասին, իսկ երբ հիշեցնում ես՝ պարզապես ժպտում են կամ էլ բավարարվում են մի քանի հակիրճ նախադասությամբ: Սակայն նրանց մասին մշտապես պետք է խոսել, քանզի միայն այդպես են նրանց անունները բերնեբերան տարածվում, դառնում բոլորին հայտնի: Իրական հերոսները նրանք են, ովքեր գործով են ապացուցում իրենց ով լինելը, եւ ոչ թե սոսկ հայրենասիրության կոչեր են անում ու տեղի-անտեղի դրոշ թափահարում:

Իրական հերոսները խուսափում են էկրաններից ու հաճախ էլ՝ գլուխները կախ են խոսում, իսկ նրանք, ովքեր կեղծ հայրենասիրություն են խաղում, վազում են դեպի պատահած տեսախցիկը՝ հերթական անգամ հիշեցնելու իրենց մասին: Իրական հերոսները չեն կորցնում իրենց դիմագիծը՝ ինչ պայմաններում էլ հայտնվեն... Շատ կարեւոր է հերոսներին ոչ հերոսներից տարբերելը:

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում մեր հարցազրույցը 20-ամյա արցախցի, շարքային զինծառայող Նորայր Քամալյանի հետ, ով հուլիսի 31-ին ղարաբաղա-ադրբեջանական շփման գծի հյուսիսային հատվածում տեղակայված զորամասերից մեկում հանկարծակի հայտնված ադրբեջանցի դիվերսանտներին արժանի դաս տվեց՝ տարբեր աստիճանի վնասվածքներ ստանալով: Դիվերսանտները փախուստի են դիմել՝ ունենալով կորուստներ, թողնելով տարբեր տիպի զինամթերք:

- Նորայր ջան, կցանկանայինք հիշեցնել ընթերցողին. ինչպե՞ս կատարվեց, որ կարողացաք մինչեւ ականջները զինված ազերի դիվերսանտներին արժանի դաս տալ, այն էլ՝ մենակ, անզեն, ձեռնամարտով:

- Հայ տղամարդը պիտի պատրաստ լինի ցանկացած փորձության, այդ դեպքում՝ Աստված նրա բազկին ուժ կտա, հավատացեք... Այդ պահին ոչ մի բանի մասին չէի մտածում, միայն գիտեի, որ զինվոր եմ ու պիտի ամեն գնով պաշտպանեմ հայրենիքս: Այդ պահին ձեռքիս զենք չկար. եթե լիներ՝ ավելին կանեի: Ինձ համար դժվար է հիշել ու խոսել կատարվածի մասին, քանի որ ես այդ օրը կորցրի ընկերներիս՝ Ազատ Ասոյանին ու Արարատ Խանոյանին: Նրանք հերոսներ են:

- Ի՞նչ եք կարծում, ի՞նչն էր պակասում ազերի զինվորների մոտ՝ համարձակությունն ու քաջությո՞ւնը, թե՞ ազգային-հայրենասիրական ոգին:

- Մեր ժողովրդի պատմությունն ուսումնասիրելով՝ կարող ենք բազում նման դեպքերի հանդիպել, երբ անզեն հայը հաշվեհարդար է տեսել զինված թշնամու հետ: Սա խոսում է ազերիների ու նաեւ նրանց եղբայրակից թուրքերի ազգային նկարագրի մասին. նրանք ոչ միայն զուրկ են ձեր նշած հատկանիշներից, այլեւ հեռու են մարդ լինելուց. նրանց մոտ սոսկ գազանային բնազդն է գործում, նրանք ի ծնե այդպիսինն են: Դա նկատել ենք ոչ միայն մենք՝ հայերս, այլեւ շատ օտարազգի մտածողներ, ովքեր տիպիկ բնորոշումներ են տվել նրանց:

- Ինչպե՞ս է հիմա ձեր առողջական վիճակը, ինչի՞ կարիք ունեք:

- Առողջական վիճակս նորմալ է: Դեռեւս բուժվում եմ, բայց շուտով ոտքի կկանգնեմ. շատ եմ ուզում նորից ծառայության վերադառնալ:

- Ի՞նչ կցանկանայիք այսօր սահմանին կանգնած հայ զինվորին:

- Կցանկանայի, որ անփորձանք լինի նրանց ծառայությունը եւ պատվով վերադառնան իրենց օջախները: Կցանկանայի, որ լինեն աչալուրջ, ամուր կամք ունենան ու չընկճվեն թշնամու ոչ մի ոտնձգությունից: Ես հավատում եմ նրանց ոգուն, կարծում եմ՝ դուք նույնպես:

- Ձեր սխրանքն օրինակ է բազում հայ երիտասարդների համար: Ինչո՞վ է հիմա զբաղված մերօրյա հերոսը:

- Դեռեւս զբաղված եմ առողջական վիճակս կարգավորելով: Շարունակում եմ բուժումներ ստանալ:

- Ի՞նչ եք կարծում՝ այսօր հայկական բանակում գերակշռո՞ղ է ձեր տեսակը: Դուք վստա՞հ եք, որ ձեր ընկերները նույնը կանեին նման իրավիճակում:

- Իհարկե, գերակշռող է: Համոզված եմ՝ ընկերներս նույնը կանեին, եթե իմ փոխարեն լինեին: Ես հավատում եմ հայի այն տեսակին, որը չի ընդունում պարտությունն ու նահանջը:

- Ո՞րն է իրական հայրենասիրության ձեր բանաձեւը:

- Եթե անկեղծ ասեմ՝ երբեմն մտորել եմ դրա շուրջ, բայց երեւի ամեն մարդ իր բանաձեւն ունի, իր չափով է անում հայրենասերի իր գործը: Այս դեպքից հետո ես շատ բան բացահայտեցի իմ մեջ, շատ բան հասկացա, սակայն բառերով ասել դժվարանում եմ:

- Շնորհակալություն, Նորայր ջան, կուզեի, որ իմանայիք՝

դուք մերօրյա իրական հերոսներից եք, ում մասին ոչ թե գրքերից, այլ իրական կյանքում ենք տեղեկանում: Խիզախներն այլ կերպ չեն լինում, հենց ձեզ պես են լինում: Հավատացեք, որ բոլորս հպարտանում ենք ձեզնով: Դուք 21-րդ դարի արցախցի երիտասարդի արժանի օրինակ ենք: Կցանկանայինք, որ քաղաքացիական կյանքում եւս տեսանելի լինի ձեր օրինակելի կերպարը: Առողջություն ու անսպառ կորով ենք մաղթում ձեզ:

Նորայր Քամալյանը ժպտում է, ու այդ ժպիտը պայքարող, չհանձնվող մարդու ժպիտ է, ասես մարտահրավեր այն ամեն չարին, ինչ կարող է ծնել պատերազմ կոչվածը: Նա չի սիրում շատ խոսել, ասում է, որ ոչ մի բանի կարիք չունի: Սակայն հետո նրա ծանոթներից իմանում ենք, որ պարբերաբար բուժում է ստանում Երեւանում. մշտական հովանավոր չունի, իր միջոցներով է բուժվում...

Թեեւ ցանկանում է ապաքինվելուց հետո վերադառնալ ծառայության, բայց բժիշկները խիստ արգելում են. պիտի հանգիստ վիճակում լինի ու մշտապես հետեւի բժիշկների խորհուրդներին:

Նորայր Քամալյանը ՀՀ նախագահի հրամանագրով պարգեւատրվել է «Արիության համար» մեդալով:

Դեպքից հետո Նորայրը ցանկություն է հայտնել մկրտվելու: Մկրտվել է: Նրա կնքահայրը «Խաչակիրներ» ջոկատի փոխհրամանատար, ազատամարտիկ Շահե Աճեմյանն է, ով Նորայրի համար հերոսության մարմնացում է:

Հուսանք՝ Նորայրի համեստ կերպարը օրինակ կծառայի շատերի համար եւ կօգնի հավատալու, որ հայ զինվորն իրոք տարբերվում է իր նկարագրով:

Հարցազրույցը՝
Հերմինե ԱՎԱԳՅԱՆԻ

Հանրապետական բժշկական կենտրոնում այսուհետ կգործի սրտի ստենտավորման կենտրոն

Նոյեմբերի 15-ին Ստեփանակերտի հանրապետական բժշկական կենտրոնում տեղի է ունեցել սրտի ստենտավորման կենտրոնի բացման արարողությունը, որին ներկա են եղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանը եւ այլ պաշտոնատար անձինք:

Կարեւորելով անգիոգրաֆիայի բաժանմունքի նշանակությունը՝ Նախագահ Բակո Սահակյանը նշել է, որ առողջապահական ոլորտի հետեւողական զարգացումը միշտ եղել ու կլինի իշխանությունների ուշադրության կենտրոնում: Իսկ այս ներդրումը կարեւորագույն քայլ է Արցախի առողջապահության ոլորտում:

ԼՂՀ առողջապահության նախարար Հ. Քուշկյանը տեղեկացրեց, որ կենտրոնում արդեն կատարվել է սրտի 7 հետազոտում, որոնցից 2-ն ուղեկցվել են ստենտավորմամբ:

Ի դեպ, կենտրոնը բացվել է նախարար Հարություն Քուշկյանի նախաձեռնությամբ ու միջոցներով: Սարքավորումը, որը տեղադրված է բաժանմունքում, Քուշկյանների ընտանիքի նվերն է Արցախին: aparaj.am-ի հետ զրույցում նախարարը նշեց. «Արցախցին պետք է բուժվի Արցախում» կարգախոսը պետք է ամբողջությամբ իրականություն դառնա: Մենք քայլ առ քայլ հետամուտ ենք լինելու, որպեսզի մեր որդեգրած կարգախոսն իրականություն դառնա եւ յուրաքանչյուր հիվանդ լիարժեք բուժում ստանա Արցախում, ու այլեւս երկար ճանապարհ կտրելու եւ արտերկրի կլինիկաներ մեկնելու անհրաժեշտություն չզգա:

Կենտրոնում այսուհետ կատարվելու է սրտի եւ մնացած բոլոր օրգանների

անոթների ստենտավորումներ, ախտորոշվելու ու բուժվելու են անոթային խնդիրներ ունեցողները: Տեղադրված է գերմանական «Սիմենս» ընկերության վերջին սերնդի անգիոգրաֆը: Սարքի տեխնիկական հնարավորությունները թույլ են տալիս պարզորոշ տեսնել մարդու ցանկացած անոթ, կատարել ներանոթային միջամտություններ՝ անգիոգրաֆիա, ի դեպ՝ ոչ միայն սրտի անոթների, այլեւ մնացած բոլոր օրգանների:

Միջամտությունները բացարձակապես անցավ են: Մեծ մասը կատարվում է նախաբազկի զարկերակից, ինչն իջեցնում է միջամտությունների բարդությունների հնարավորությունը եւ ավելի հարմարավետ է հիվանդների համար: Այն նաեւ կրճատում է հոսպիտալացման ժամկետը:

Նախարարի հավաստմամբ, մասնագետների խնդիր չունեն: Արցախցի մասնագետները վերապատրաստվել են «Էրեբունի» ԲԿ-ի՝ ակադեմիկոս Բագրատ Ալեքյանի անվան անգիոգրաֆիկ ծառայությունում եւ Ռուսաստանում՝ Բակուլեւի անվան սրտանոթային վիրաբուժության գիտական կենտրոնում:

«Արդեն մի քանի օր է ինչ արցախցի մեր գործընկերների հետ աշխատում ենք Արցախում, եւ ամեն ինչ այնպես համակարգված եւ պատշաճ մակարդակով է կազմակերպվում, որ թվում է՝ տարիներ շարունակ գտնվել ենք կողք կողքի եւ յուրաքանչյուր հարցի փոխըմբռնումով ենք մոտենում,- «Ապառաժի հետ զրույցում նշեց սրտաբան Համլետ Հայրապետյանը եւ հավելեց,- վիրահատական միջամտությունները, բուժման հետ կապված բոլոր գործընթացներն ընթանում են միեւնույն «սցենարով», միայն հիվանդների ցուցակն է երկարում... Ցավոք, նրանց մեջ փոքր թիվ չեն կազմում սրտանոթային լուրջ խնդիրներ ունեցողները, որոնց շտապ բուժօգնություն է ցուցաբերվում: Ուրախ ենք, որ մեզ հաջողվում է մարդկանց կյանքը փրկել»:

Ի դեպ կենտորնն աշխատելու է 24-ժամյա ռեժիմով՝ սերտ համագործակցելով առողջության պահպանման առաջնային օղակի եւ հատկապես շտապօգնության ծառայության հետ: Հաստատված արձանագրությունների համաձայն՝ սուր ինֆարկտների դեպքում արագ եւ ճիշտ կգնահատվի հիվանդի վիճակը, եւ ամենակարճ ժամանակում կտեղափոխվի Ստեփանակերտի հանրապետական բժշկական կենտրոնի անգիոգրաֆիկ կենտրոն:

Անի ԱՂԱՏՅԱՆ

Մի քիչ մարդ

Աշնան մի ցուրտ օր Արուս տատը վեր կացավ եւ որոշեց քաղաք գնալ:

- Ի՞նչ կա, Արուս, ճամպրուկդ կապած ո՞ւր ես գնում էս ցրտին,- հարցրեց հարեւան Սերժիկը՝ տեսնելով վաղ առավոտյան կանգառում նստած հարեւանուհուն:

- Քաղաք եմ գնում: Մի քիչ ձու եմ հավաքել, տանում եմ ծախեմ, գամ, թե չէ գյուղում առնող չկա համարյա, իսկ հավերս մնացել են առանց կուտ: Տանեմ ծախեմ, որ կուտ առնեմ:

- Հա, քանի՞ ես ծախում ձուն:

- Հարյուր դրամ:

- Պա, տնաշեն, հարյուրս ո՞րն ա: Խեղճ քաղաքացիք ո՞նց առնեն էդ ձուն: Հրեն տելեվիզորն ասում ա, որ քաղաքի մեջ ավտոբուսները թանկացրել են, 100 դրամ են սարքել, մարդիկ բողոքում են: Հիմա էդ խեղճ քաղաքացիք ձո՞ւ առնեն, թե՞ ավտոբուս նստեն:

- Ի՜, Սերժիկ, դու էլ բան ես ասում, քաղաքացին գյուղացու մասին մտածում ա՞, որ գյուղացին մտածի քաղաքացու մասին: Ուզում են՝ թող ավտոբուս չնստեն, ոտքով գործի գնան: Ես որ ոտքով ամեն օր աղբյուրից ջուր եմ կրում, իմ մասին հիշող կա՞: Վաթսունն անց մենակ կին եմ, գյուղում օրընդմեջ ենք ջուր ստանում, էն էլ՝ կես ժամով, ո՞ւմ դարդն ա:

- Էդ էլ ես ճիշտ ասում, Արուս, մեր դարդը ոչ մեկի դարդը չի: Բայց կկարողանա՞ս մի կարգին ծախել, որ գոնե գնալ-գալուդ փողը դուրս գա, տակն էլ մի քիչ փող մնա՝ կուտ առնես, հացմաց, պեսոկ-մեսոկ առնես:

- Աստված մեծ է, տեսնենք էլի:

Այդ րոպեին զրույցն ընդհատվեց մոտեցող ավտոբուսի ձայնից: Գյուղի ավտոբուսը դռդռալով կանգ առավ: Արուս տատը բարձրացավ ավտոբուս:

- Բարեւ, ուստա Համո,- դիմեց վարորդին:

- Բա՛րեւ, բա՛րեւ, Արուս ջան:

- Ուստա Համո, էս խի՞ էսքան քիչ են ուղեւորներդ,- հարցրեց Արուս տատը՝ հաշվելով ներսի մարդկանց,- ընդամենը հինգ հոգի:

- Է՛, Արուս, հիմա ո՞վ ա ավտոբուս նստում: Գյուղացիք ավտոբուսով էլ չեն գնում քաղաք, ավտոբուսի դարն անցել է: Մարդիկ զարգացել են, սեփական ավտոներ ունեն, ավտոյով են գնում քաղաք:

- Տեղ են ասել է՛, որ գյուղի զարգացածը ոչ մի տեղ չկա: Ասա, այ մարդիկ,

մեքենաներով մի մրցեք է՛, ձեր գյուղի ջրի հարցը լուծեք,- վրդովվեց Արուս տատին:

Ավտոբուսում նստած երկու երիտասարդները ծիծաղեցին: Արուս տատը վիրավորվեց:

- Դե որ երիտասարդը ծիծաղի, գյուղն էլ գյուղ չի դառնա: Էլ ո՞ւմից ենք նեղանում, որ մենք մեր խնդիրների վրա ծիծաղում ենք:

Քարքարոտ ճանապարհով ընթացող ավտոբուսը հանկարծ հայտնվեց հնամաշ ասֆալտի վրա գոյացած փոսերից մեկում, ապա թափով դուրս եկավ փոսից: Ուղեւորներն ասես տեղում ցատկեցին: Արուս տատը նկատեց, որ ճամպրուկը ցած է ընկել:

-Հը՞, Արուս, լա՞վ ես,- հարցրեց ուստա Համոն:

- Ես լավ եմ, համա ձվերի կեսը կոտրվել է, Համո: Չե՞ս ամաչում, նորմալ քշիր էլի. մի դարդս երկու սարքեցիր:

- Ներող եղիր, Արուս: Ես ի՞նչ անեմ, մի օր էլ երեւի էս ճանապարհի հերթը կգա, կսարքեն մարդավարի:

Արուս տատը հավաքեց կոտրատված ձվերը:

Քառասուն րոպե հետո ավտոբուսն արդեն քաղաքում էր: Արուսը շարժվեց դեպի այն մայթը, ուր ավտոբուսները կանգնում էին, գյուղից եկած մարդիկ էլ վաճառում էին իրենց հետ բերած միրգ-բանջարեղենը: Մայթից մի քանի քայլ այն կողմ մի մեծ ցուցանակ էր փակցված, որի վրա շեղատառերով գրված էր՝ «Հաղթանակած ժողովրդին՝ պայծառ ապագա»:

- Մալադեց, լավ էլ գրել եք: Էդ երեւի ինձ չի վերաբերում: Թե չէ՝ ո՞ւմ է հետաքրքրում իմ կոտրատված ձվերի պատմությունը:

- Բարեւ ձեզ,- Արուսը հասավ գյուղացիներին,- չե՞ք մրսում էս ցրտին:

- Բա ի՞նչ ենք անում, մի տաք թեյ լիներ, հաճույքով մարմիններս կտաքացնեինք,- ասաց լոբի վաճառող տղամարդը:

- Արուս տատին ձվերը հանեց տոպրակից, մայթի իր բաժին մասում մի շոր փռեց ու ձվերը դրեց:

- Տատի, ի՞նչ արժե ձուն,-հանկարծ հարցրեց անցնող մեկը:

- Հարյուր դրամ:

- Օ՛, թանկ է, եթե 80-ով տաս, ամբողջը կառնեմ:

- Չէ, բալա՛, բա՞ գնալ-գալս, բա՞ հավերիս կուտը, բա՞ իմ ուտելիքի ծախսը:

- Տատի, արի չվիճենք, 80-ով տուր՝ առնեմ գնամ:

- Լա՛վ, վերցրու, այ բալա, մեկ ա՝ էսօր օրս թարս ա սկսվել:

- Տուր գնա, Արուս,- մեջ ընկավ լոբի վաճառող տղամարդը: Մեկ է, էս քաղաքացիք մինչեւ մի բանը 20-50 դրամ չեն էժանացնում, չեն առնում:

Արուս տատը ձվերը փաթաթեց ու դրեց տոպրակի մեջ: Ձվերը ձեռքին դողում էին:

«Խեղճ հավեր, էս ցրտին ձու եք ածել, ես էլ էսքան էժան ծախում եմ, բա ձեր կո՞ւտը»,- ինքն իրեն մտածելով՝ Արուս տատին տոպրակը մեկնեց գնորդին:

Ցուրտ քամին թափառում էր սոված շան պես, թափանցում մարդկանց փեշի տակով ու այդպես մնում այնքան ժամանակ, մինչեւ մարդը մի տաք տեղ էր ճարում:

Կեսօրից հետո գյուղացիք ազատեցին մայթը. ամեն մեկը շտապում էր հասնել գյուղ մեկնող իր ավտոբուսին: Արուս տատին հաշվեց ձեռքի գումարը: «Գնալ-գալուս փողը եթե հանեմ, տակը մի քիչ գումար է մնում, ի՞նչ անեմ: Եթե պեսոկ-մեսոկ առնեմ, հավերս կմնան առանց կուտ: Եթե կուտ առնեմ, պիտի առանց չայ, պեսոկ, կոնֆետ մնամ»,- շվարեց նա ու մնաց տեղում կանգնած:

- Լա՛վ, գնամ կուտ առնեմ, թե չէ հավերը սոված կմնան, մեղք են. պիտի ուտեն, որ ձու ածեն: Ոչինչ, հո Արուսը սոված չի՞ մեռնի,- որոշեց ինքն իրեն:

Րոպեներ անց ավտոբուսը դռդռալով տեղից շարժվեց: Արուս տատը պինդ բռնել էր կուտի մեծ տոպրակը եւ վախենում էր տեղից շարժվել: Նա մտովի հաշվում էր կոտրատված ձվերը, կռվում ճանապարհը չսարքողի հետ, հիշում մայքին կանգնած մարդկանց ցրտահար դեմքերը եւ մայթից քիչ հեռու կախված շեղատառ ցուցանակը:

- Կարեւորը, որ հավերը սոված չմնան...

Հերմինե ԱՎԱԳՅԱՆ

Ժամանակակից բարքեր /մանրապատումներ/

Կշեռքը

Հարեւանուհիներից մեկը երիտասարդ, ասող-խոսող, մի քիչ էլ լկտի աներես էր: Մյուսը ծեր, անժպիտ, լռակյաց, մեջքից կորացած, ինքնամփոփ կին էր. չէր խառնվում հարեւանների մնործերին, մի կողմ քաշված՝ ինքն իր համար մի կերպ ապրում էր: Երիտասարդ հարեւանուհուն, չգիտես ինչու, դուր չէր գալիս ծեր կնոջ ապրելակերպը: «Ջադու» պիտակ էր կպցրել, անվան փոխարեն միշտ «ջադու» էր ասում, իսկ լսողներն էլ ընտելացել էին այդ «անվանը»՝ մոռացության մատնելով իսկականը: Օրերից մի օր երիտասարդ հարեւանուհին տանը կշռելու բան ուներ, բայց կշեռք չուներ: Մյուս հարեւանուհիներից ոչ ոք տանը չէր, իսկ գործը շտապ էր: Իրավիճակից դժգոհ՝ նա կանչեց իր փոքրիկ տղային եւ ասաց.

- Գնա Ջադուին ասա՝ թող կշեռքը տա, կշռելու բան ունեմ՝ կշռեմ, հետո շուտ կտանես, կտաս իրեն:

Փոքրիկ տղան հասկացավ՝ խոսքն ում մասին է: Առանց ուշանալու դուրս վազեց, կանգնեց հարեւանուհու դռների մոտ ու բարձրաձայն կանչեց.

- Ջադու տատի՛, Ջադու տատի՛:

Տանտիրուհին, երեխայի ձայնը լսելով, մոտեցավ բաց դռան առաջ կանգնած երեխային:

- Ջադու տատի՛, մայրիկս ասում է՝ բան ունենք կշռելու, կշեռքը տվեք՝ տանեմ կշռենք, շուտ կբերեմ:

Ծեր հարեւանուհին ընդհուպ մոտեցավ փոքրիկին, ձեռքը դրեց նրա ուսին ու իր ջրակալած, կնճիռներով շրջափակված աչքերը հառեց երեխայի վառվռուն աչքերին.

- Բալիկ ջան, էստեղ Ջադու տատի չի ապրում: Ես Մանուշակ տատիկն եմ: Գնա մայրիկիդ ասա՝ եթե ուզում է, թող գա՝ կշեռքը տամ, տարեք բանեցրեք՝ որքան հարկավոր է:

Երեխան շրջվեց, տուն վազեց ու էլ ետ չեկավ:

Կյանքում միշտ մի պահ է վրա հասնում, երբ հակադիր կողմերից մեկը կամ երկուսն էլ կարող են կշեռքի վրա դնել իրենց գործելակերպը...

Էմմա ՊԵՏՐՈՍՅԱՆ

Լատինական Ամերիկայի «Հայաստանները»



Նուեվա Արմենիա, Ատլանտիդա նահանգ, Հոնդուրաս

Լատինական Ամերիկան եւ հատկապես Կենտրոնական Ամերիկան լի են առեղծվածներով: Այդ առեղծվածներից մեկը կապված է հայերիս հետ, իսկ ավելի կոնկրետ՝ մեր հայրենիքի անվան հետ:

Մի տեսակ հպարտություն ենք զգում, երբ Հայաստան անունով կամ հայկական անվանմամբ փողոցներ, անվանումներ ենք լսում, տեսնում օտար քաղաքներում: Իսկ ի՞նչ կլիներ, եթե իմանայիք, որ «Հայաստան» անվամբ քաղաքներ ու գյուղեր կան: Եվ այդ «Հայաստանները» գտնվում են ոչ թե այնպիսի հայաշատ երկրներում, ինչպիսիք են Լիբանանը, Ֆրանսիան, ԱՄՆ-ն, այլեւ այնպիսի երկրներում, որոնց անունները նույնիսկ չենք լսել: Լատինական Ամերիկայի երկրների որոշ քաղաքներում ոչ միայն «Արմենիա» անունով փողոցներ, պողոտաներ ու հրապարակներ են անվանակոչվել, այլեւ մի քանի երկրում «Հայաստան» կամ «Նոր Հայաստան» անվամբ քաղաքներ եւ գյուղեր կան, որոնց անվանումները առեղծվածային են, քանի որ գտնվում են այնպիսի երկրներում, որտեղ ոչ միայն հայ համայնք չկա, այլեւ՝ երբեւէ հայեր չեն բնակվել:

Թերեւս, Լատինական Ամերիկայի բոլոր «Հայաստաններից» ամենամեծը եւ ամենաճանաչվածը Կոլումբիայի Քինդիո նահանգում գտնվող Արմենիա քաղաքն է: Այս մասին երեւի շատ թե քիչ լսած կլինեք: Այն ունի մոտ 300 հազար բնակիչ: Լատինական Ամերիկայի «Հայաստաններից»՝ միայն Կոլումբիայի Արմենիա քաղաքի անվանման հետ կապված կարելի է գտնել որոշակի տեղեկություն: Քաղաքի անվանման մասին երկու վարկածներ կան: Առաջին վարկածը քաղաքի անվանումը կապում է քաղաքի տարածքում գտնվող հայ ագարակատիրոջ հետ, իսկ երկրորդ վարկածի համաձայն, որն ավելի հավանական է համարվում, քաղաքն այդպես է կոչվել Համիդյան ջարդերի ժամանակ հեռավոր Հայաստանից եկող քրիստոնյա հայերի դաժան ջարդերի մասին լուրերի տպավորության ազդեցությամբ: Քաղաքի ղեկավարությունը որոշել է՝ ի համերաշխություն Օսմանյան Թուրքիայում կոտորվող քրիստոնյա հայերի՝ քաղաքը վերանվանել Արմենիա:

Հրապարակ Արմենիա քաղաքում, Կոլումբիա

Ի դեպ, Արմենիա քաղաքը եւ Քինդիո նահանգը ճանաչել են Հայոց ցեղասպանությունը:

Իսկ այժմ տեղափոխվենք մի երկիր, որի անունը երեւի շատերս նույնիսկ չենք լսել կամ էլ լսել ենք միայն ֆուտբոլի առաջնությունների ժամանակ: Կենտրոնական Ամերիկայում գտնվող էկզոտիկ ու ոչ պակաս էկզոտիկ անվանում ունեցող մի երկիր՝ Հոնդուրաս: Հոնդուրասում երբեւէ չի եղել հայկական համայնք եւ ընդհանրապես որեւէ հստակ տեղեկություն չկա այնտեղ նախկինում եւ այժմ բնակվող հայերի մասին, սակայն այդ երկրում կա երկու «Հայաստան»: Կարիբյան ծովի ափին գտնվող Ատլանտիդա նահանգում է գտնվում Նուեւա Արմենիա (Նոր Հայաստան) փոքրիկ քաղաքը: Քաղաքի հիմնական բնակիչները տեղաբնակ արավակ ցեղի հնդկացիներ են եւ Աֆրիկայից բերված սեւամորթ ստրուկներ սերունդներ: Տեղացիները հիմնականում խոսում են գարիֆունա լեզվով, որն իսպաներենի եւ հնդկացիական լեզուների խառնուրդ է: Քաղաքի բնակիչները նույնիսկ չգիտեն Հայաստանի կամ հայերի մասին: Սակայն Հոնդուրասով ճանապարհորդող հայի զարմանքը չի սահմանափակվի միայն Կարիբյան ծովափին գտնվող այդ փոքրիկ «Նոր Հայաստանով»: Որքան էլ տարօրինակ թվա, բայց Հոնդուրասում՝ մայրաքաղաք Տեգուսիգալպայից ոչ հեռու, կա եւս մեկ «Հայաստան», որը նույնպես կոչվում է Նուեւա Արմենիա (Նոր Հայաստան): Այս փոքրիկ քաղաքի մասին նույնպես շատ տեղեկություններ չկան, միայն նշվում է, որ քաղաքը հիմնադրվել է 1856 թվականին եւ կոչվել է Նուեւա Արմենիա:

Դժվար է որեւէ կապ գտնել Հոնդուրասի «Նոր Հայաստանների» եւ հայերի կամ Հայաստանի հետ: Սա, կարելի է ասել, Լատինական Ամերիկայի առեղծվածներից մեկն է:

Սակայն Լատինական Ամերիկայի «Հայաստանների» աշխարհագրությունը չի սահմանափակվում միայն Կոլումբիայով եւ Հոնդուրասով: Եվ այսպես, տեղափոխվենք Կենտրոնական Ամերիկայում գտնվող մի փոքրիկ երկիր՝ Էլ Սալվադոր: Այս երկրի քարտեզին նայելը նույնպես հաճելի կլինի հայերիս համար. մայրաքաղաք Սան Սալվադորից ոչ հեռու, Սոնսոնատե նահանգում գտնվում է Արմենիա անունով մի քաղաք: Քաղաքում բնակվում է մոտ 35 հազար մարդ: Մինչեւ իսպանացիների կողմից Ամերիկայի գաղութացումը՝ քաղաքի տարածքում հնդկացիական բնակավայր է եղել եւ կոչվել է Գուայամոկո: Ինչպես Հոնդուրասի «Հայաստանների» դեպքում, Էլ Սալվադորի այս քաղաքի անվանման վերաբերյալ ոչ ոք հստակ տեղեկություն չունի ու չգիտի, թե ինչպե՞ս եւ ինչո՞ւ է քաղաքն անվանվել Արմենիա:

Էլ Սալվադորի եւ Հոնդուրասի հարեւանությամբ գտնվող Գվատեմալայում կա Finca Nueva Armenia (Նուեւա Արմենիա ագարակ) անվանմամբ կա մի ագարակ, որտեղ արտադրվում է տարածաշրջանում հայտնի Նուեւա Արմենիա ապրանքանշմամբ սուրճ: Ոչ ներկայիս, ոչ էլ նախկին ագարակատերերը հայեր չեն:

Տեսարան Արմենիա քաղաքից, Էլ Սալվադոր

Էկվադորի բարձր լեռներում եւս մեկ «Հայաստան» կա՝ Նուեւա Արմենիա գյուղը, որի հիմնական բնակչները հնդկացի բնիկներ են:

Լատինական Ամերիկայում ուրիշ «Հայաստաններ» նույնպես կան: Մեքսիկայի մի քանի քաղաքներում, որտեղ ոչ մի հայ չի բնակվում, կան Արմենիա անվամբ փողոցներ: Բրազիլիայի ամենախոշոր քաղաքում՝ Սան Պաուլոյում, գործում է Արմենիա անունով մետրոյի կայարան, որի հարեւանությամբ է գտնվում նաեւ Արմենիա փողոցը: Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս Այրեսում եւ շրջակա քաղաքներում կան Արմենիա անունով մի շարք փողոցներ եւ հրապարակներ: Եվ, իհարկե, Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյում կա Արմենիա անվանմամբ հրապարակ եւ պողոտա:

Պատրաստեց
Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ. 97 38 43, E-mail: info@aparaj.am
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 500: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ալեսյա Բեջանյան